Իմ գայլը

Կարծես կորցրել էի, կարծես չէի ստացել– ուսանողական թոշակի 140 ռուբլին մի շաբաթում ցամաքեց: Ամեն ստանալիս մեկ կիլոգրամ հացի 3 ռուբլին ես բազմապատկում էի ամսվա 30 օրով, անում էր 90 ռուբլի, 50 ռուբլու շռայլ, շփոթեցնող հավելում էր լինում, որ կարելի էր կոնֆետի, թատրոնի ու կինոյի տալ, բայց հրեշաբար հզոր ինչ-որ երախներ ամեն անգամ թաքուն կլլում էին իմ հաշիվները, և ամեն անգամ ես ինձ ասում էի. «Էս անգամ սխալ եղավ– մյո՛ւս թոշակին»:

Ուսումնարանը մեզ համար սենյակ էր վարձել, սենյակում վառարան էր դրել, երբեմն մի երկու գիրկ՝ մի երեք վառարան փայտ էր տալիս– թոշակի պես՝ փայտը մի անգամ բռնկվում, տաքացնում ու պրծնում էր: Դեռ օգոստոսին, երբ ինձ բերելու էին ուսումնարան, հայրս և մեր այն գյուղացին, որ ապրում էր Կիրովականում, նավթի դեղին լույսի տակ մեր տանը հաշվում էին, թե ես ինչպես եմ ապրելու 140 ռուբլով, հայրս չգիտես ինչու թոշակի ռուբլիները հացի գնի վրա հաշվիչով էր բաժանում, հատիկները խուլ չխկում էին, մեր գյուղացին ասում էր «կապրի», բայց չգիտեր ինչպես կապրեմ, ասում էր «կապրվի՛», այսինքն՝ ես կարող եմ ապրել այդքան փողով, հայրս սակայն նրան չէր հավատում և չէր էլ առարկում, որովհետև՝ առարկեր ի՞նչ աներ: Նրանք՝ մեծերը՝ և հայրս ու մեր գյուղացի՛ն, և ուսումնարանի ղեկավարությո՛ւնը, գիտեին, որ այդ թոշակը չնչին է և այդ փայտը չնչին է, բայց ոչ մի կերպ չէին կարող լիաձեռն լինել և հույսները դնում էին հրաշքի վրա: Այդ հրաշքն այն էր, որ մենք ծնվել էինք ապրելու համար, երեխա էինք և պիտի ապրեինք:

Բարակ թիկունքներս կծկած, գրքերը թևներիս տակ՝ սպիտակցիների խումբն ու ես համարյա թե վազելով տուն եկանք, երկու շաբթվա դասագրքերը սպիտակցիները ջոկջկեցին լցրին ուսապարկերը և դուրս թռան՝ վազելու կայարան: Եվ պարզվեց, որ նրանց հետ ես իզուր էի շտապում, քանի որ նրանք շտապում էին հասնել գնացքին, իսկ ես գնալու տեղ չունեի: Նրանց գյուղերը մոտիկ էին, նրանք գնում էին գոնե մի կիրակի ապրելու հորենական թոնրի շուրջը և երկուշաբթի վերադառնալու հացով-պաշարով: Նրանց գյուղերում հաց կար –

Կիրովականի իմ հեռվից ես այնինչ զգում էի մեր գյուղի ավլած աղքատությունը: Սառը, ամայի սենյակում ես մնացի մենակ: Սպիտակցու պահարանի առաջ լավաշի մի փոքրիկ, մի մկան փշուր կար՝ այդ էր և սառը վառարանը: Քաղցը նայում էր և մեռյալ վառարանի՛ց, և սառն անկողնի՛ց, և խափան ռադիոյի՛ց ու Չեկ Լոնդոնի «Սպիտակ ժանիքը» գրքից: Թուքը կուլ տալով՝ կարելի էր շունչը պահել ու լսել, թե ինչպես է գվվում ածուխի վառարանը տանտիրոջ մեծ սենյակում, ինչպես է նրա աղջիկը թախտին, ոտքերը շալով ծածկած, շրջում գրքի էջը, և թե ինչաես է բուրում հացը նրանց սեղանին:

Ես գնացի մեր գյուղացու տուն: Նրանք լավ ժողովուրդ էին, նրանց աղջիկը գյուղի դպրոցում իմ ընկերուհին էր, նրանց հարսը շեկ, սիրուն ու ջերմ արարած էր, բայց նրանք ճաշել վերջացրել էին, հորըս ընկերը ճաշից հետո պառկել էր մի քիչ նիրհելու, և տանը լռություն էր: Այդ լռության մեջ ես կաշկանդվեցի, և նրանք չհասկացան, որ թոշակիս փողը վերջացել է: Գյուղի մեր աղքատությունը նրանք հիշում էին – ես չէի կարող իբր թե հորս անունից պարտքով փող խնդրել: Ես դեռ շատ էի երեխա– չէի կարող իմ ապագայի անունից պարտքով փող ուզել: Ես մտածեցի, որ նրանց աղջիկը բութի մեկն է, հազիվ թե երբեէ համալսարան ընդունվի, և դուրս եկա:

Մանկավարժական իմ ուսումնարանի դարպասները փակ էին, մինչև երկուշաբթի ես այնտեղ ոչ ոք չունեի: Սեդրակ մեր հորեղբոր մեծ տունը, լայն բակն ու գեղեցիկ բազրիքները այդ ձմեռվա մեջ պարուրված էին տաք ճաշի հոտով, նրանց վառարանն այնքան խաղաղ էր այրվում, որ տանիքից նույնիսկ ծուխ չէր ելնում... բայց անցյալ միակ անգամ նրանք չհասկացան, թե ես իրենց ինչն եմ: Սեդրակ հորեղբայրը գյուղից վաղուց էր քոչել, իմ հորը երեխա ժամանակ էր տեսել, կարծեց ես իմ հայրն եմ, ասաց. «Ավետիք հորեղբայրը էսքան փոքր տղա ունի՞»:

Կտրուկ շուռ գալով՝ ես մի անգամ էլ անցա Սեդրակ մեր հորեղբոր դռնով, որպեսզի նրանց տանտիկինը՝ որ գորգը բազրիքի վրայից հավաքում էր անցորդիս նայելով, ինձ ճանաչի ու ներս կանչի, բայց

պատշգամբը հիմա ամայի ու դռները ծածկած էին, պատեֆոնի երգը խուլ հեռվից էր զալիս: Լացն ու զայրույթը ինձ խեղդեցին:
Այդպես թափով էլ ես հասա ու հրեցի հանրակացարանի մեր դուռը: Փակ էր, բանալին իր տեղում մեխից կախված էր, ոչ ոք չէր եկել, սենյակում ոչ ոք չկար– նույն լուռ ռադիոն, բաց գիրքն ու լավաշի փշուրն էին:

Ես քանդեցի ուսումնարանի տված ներքնակի կարը, կեղտոտ, թաղկած բամբակների միջից հանեցի այն, որ միշտ այդտեղ էին, որոնց մասին Կիրովական այդ քաղաքում ոչ ոք չգիտեր– իմ տրեխները, հորըս գործած տրեխները: Քաթանե կոշիկներն ամեն անգամ թրջվում, կուչ գալիս ու ոտքերս սեղմում էին: Դուսը ներսից կողպելով՝ ես քաթանե կոշիկները խցկեցի ներքնակի մեջ, մի վայրկյան գուլպայով մնացի՝ և հատակը սառն էր, հագա տրեխներս, ձգվեցի, դռան մոտ պատրաստ կանգնած սպասեցի, մինչև տանտիրոջ քայլերը պատշգամբում հեռացան, և այդ սենյակից, պատշգամբից ու բակից դուրս թռա ավելի արագ, քան տանտերերը կհասցնեին նկատել իրենց վարագույրների արանքից:
Լուսնի ու սառույցների միջով, շների սառը հաչոցների ուղեկցությամբ ես Վանաձորից գնացի կայարան, վազեցի ապրանքատար գնացքի կողքից, հենակոճղերի արանքներում ոստոստալով առաջ թողեցի բոլոր վագոնները, թռա և ծնկներով ու մատներով կառչեցի վերջին վագոնից: Ափերս փակչել էին թաց բռնակին, և ինձ թվաց դա լավ էր, այլապես ոտքիս համար տեղ փնտրելիս ես պիտի պոկվեի բռնակից: Գլխարկս ընկնում էր, ծնկներս քերծվել էին, բայց արյուն չէր գալիս, որովհետև, ցուրտ էր: «Գնում եմ վրաստան, Շուլավեր եմ գնում,– խաբեցի ես ուղեկցորդին,– տատս մեռել է»: Նա ինձ քուրքի տակ առավ, այդ քնքշանքից իմ ներսում ես մի քիչ հուզվեցի, բայց այդպես էլ չասացի, թե իջնելու եմ երեք կայարան հետո, որպեսզի ուզելիք փողը նա ակնկալի Շուլավերի մոտերքը: Իմ կայարանն անցնելուց հետո, երբ ընթացքը դեռ չէր արագացել, ես ներքև նետվեցի նրա քուրքից ու վագոնից: Նրա հայացքն զգալը մի քիչ ամաչեցնում էր, բայց գնացքը հեռացավ: Այդպես՝ ամեն ինչ լավ գնաց. և Դսեղ գյուղի շներից

չվախենա՛լը, և ձյունոտ քամի՛ն, և մեռելներից չվախենա՛լը:
Լուսադեմին– ես ետ տարա մեր տաք կիսամութ տան դուռը և ասացի ժպտալով. – Եկել եմ:– Արմո ջա՞ն,– անկողնում վրա նստեց հայրս:
Մայրիկը վառարանը փչում էր:

– Վույ, կուրանամ ես, երեխայիս փողը վերջացել է, կուրանամ ես:
Մայրիկի փափուկ ծոցն ու վիզը տա՛ք-տաք էին:
– Ախպեր ջա՞ն,– կիսախավարի մեջ անկողնում վրա նստեց հայրս:
– Կուրանամ ես, կուրանամ, կուրանամ՝ չտեսնեմ... Լամպի լույսը բարձրացավ: Վիզը բարակ, մեծ գլուխը համարյա թե ոտքերի մեջ ու քամակը բաց՝ փայտե լայն թախտին երևաց Հրայրը: Թնկթնկոցով արթնացավ Նանարիկը, նստեց անկողնում, աչքերը բացեց.– Լամպը վառել եք,– հետո վարդագույն այտիկները ետ գնացին, աչքերը լցվեցին ժպիտով, շրթունքները ձգվեցին, երկարացան:
– Կուրանամ ես, փողդ վայ թե պրծել է...
Վառարանը ճթճթաց, համարյա թե ցատկոտեց և ապա փաղաքշեց ջերմությամբ, սիրով, ընտանիքով:
– Այտա, եկել ե՞ս,– գլուխը ոտքերի արանքից հանել էր Հրայրը:– Մի հանելուկ ասեմ, թե գտնես ինչն է՝ քո տեղը գնամ Կիրովական: Էն ինչն է ինչը՝ քիթը տաք է, քամակը սառը:
– Ախպորդ լավ բաներով ես դիմավորում,– տրեխները հագնելով ասաց հայրիկը:
– Ինքն ինձ համար քաղաքից ի՛նչ է բերել որ:
– Սոված, ծարավ, ուրիշի դռներին... կուրանամ ես: Հայրիկը գնաց կովերին կեր տալու: Հավերը գոմից դուրս թափվեցին, ոտքերը ճաղերի գլխին՝ այծն սպասում էր խոտի: Նախշուն կովը պարանոցը թեքած ինձ էր նայում ու մզզում էր: Նա կրծակալել ու փափկել էր, շուտով ծնելու էր: Սաթիկը մայիսի վերջերին էր ծնելու:
– Դժվարն էս տարին է,– ասաց հայրիկը,– էս տարի որ համբերես՝ նոյեմբերին Նախշունի փողը քեզ կտամ:
Ես չէի ցանկանում այդ տանը որևէ փոփոխություն լիներ և այդ տնից որևէ բան պակասեր:
– Նախշունը չծախես,– ասացի ես:

– Պիտի ծախվի,– ասաց հայրիկը,– քեզ համար՝ պիտի ծախվի:
– Չեմ վերցնի: Չծախես, չեմ վերցնի:
Նա մեղմ ժպտաց, անցնելիս գլուխս սեղմեց կրծքին: Ես գոմն արագ մաքրեցի, խոտը պնդացրի ախոռի մեջ, շոշափելով՝ գտա հորթի տեղը– մոր փորում հորթը հրճվանքի պես խաղում էր:
– Քո պապ Ավետիքը,– գոմ մտավ մայրս,– կովից մի բժշկի չափ հասկանում էր, բայց կուշտ փորով հաց չտեսավ, գործ չունես տավարի հետ:
Հաճարի ձեթով տապակած կարտոլ կերանք, խմեցինք տանձի չրով թեյ: Ճաշին կերանք աղով խաշած կարտոլ ու կաղամբի թթու: Հրայրը Նանարին պատի վրա հանկարծ գայլ ցույց տվեց ու թռցրեց նրա մի կարտոլը: Պատի վրա ոչ մի սուտասան գայլ էլ չկար, իսկ իր կարտոլներից մեկը վայ թե կորել էր:
– Արմիկ, երեքից հետո չո՞րսն է, թե հինգը:
– Չորսը:
– Բա իմ կարտոլը խի՞ չի հինգ հատ:
– Տասը հաշվիր՝ տասը հատ կլինի,– ասաց Հրայրը:
– Չորս հատը բա ո՞նց տասը հատ հաշվեմ:
– Մեկ, երկու, երեք, չորս, հինգ... տասը:– Եվ Հրայրը թակարդը բացել տվեց, շալակեց, տարավ աղվես բռնելու, մեր աղքատ թաղի մոտ ձյուների մեջ աղվեսի հետք էր տեսել: Իսկ հայրիկը դեռ չկար:
– Կուրանամ ես, Արմիկ ջան, շա՞տ ես մրսում:
– Որ դասից գալիս եմ՝ գնում եմ Հասմիկենց տուն, Հասմիկի հետ վառարանի կողքին նստում ենք մինչև իրենց տնեցիների գալը: Հետո էլ մտնում եմ անկողին ու կարդում:
– Բա առավոտնե՞րը:
– Առավոտները վազելով գնում ենք, հետո որ վազելով ենք գնում՝ էլ չենք մրսում:
– Դե որ տեղաշորում կարդաս՝ գեղարվեստական կկարդաս, բա դասերդ ե՞րբ ես սովորում:
– Մի անգամ էլ գնացել եմ թատրոն:
– Մի՛ ամաչիր, մեկ-մեկ գնա Սեդրակ հորեղբոր տուն:
– Պետքս չեն:

– Տաք ճաշ կլինի:
Հայրիկն ամաչելով, կարծես ուրիշի տուն էր մտնում, ներս եկավ. եղած մի տոպրակ ցորենը տարել էր աղալու՝ ջաղացները սառած էին եղել, ալյուր չէր բերել, ցորենը ետ էր բերել: Գետակն ի վեր ներքևից եկողները ասել էին մինչև մեծ Դեբեդ մեր գետի բոլոր ջաղացները սառած են, չեն աշխատում, աշխատեն՝ ի՞նչ աղան:
– Կուրանամ ես: Որ մեր երկանքով ձավար անենք՝ կարո՞ղ ես տղամարդու պես ճաշ եփել: Տաք ճաշ կլինի, Արմիկ ջան, մեկ էլ՝ մի ամիս կապրես, հաց չի, որ փչանա: Բեր ձավար անենք:
– Կեփեի, բայց փետ չկա, է: Ուսումնարանը որ փետ է տալիս՝ երկու օրում վառում ենք:
– Հասմիկն ո՞վ է, Հասմիկին կտաս՝ կեփի իրենց կրակի վրա:
– Կարելի է,– ասաց հայրիկը:
Բայց չէր կարելի, որովհետև Հասմիկը կիմանար, որ ես միայն ջուր ու ձավար եմ ուտում:
– Չի կարելի,– գրքի վրայից ասաց Հրայրը: Հայրիկն ու մայրիկը նրան դարձան.
– էդ ինչո՞ւ չի կարելի, տո լոշտա՛կ:
– Արմիկը Հասմիկին սիրահարված է:
– էդ՝ գրքի՞դ մեջ է գրած:
Ես կարողացա չկարմրել:
– Արմիկ, որ սիրահարվում են՝ ո՞նց են սիրահարվո՛ւմ,– ծոր տվեց Նանարիկը: Հայրիկն ու մայրիկը ծիծաղեցին, և դա ինձ համար փրկություն էր:
– Ոնց որ դու՝ քո հորը,– ասաց մայրիկը:
– Ես հայրիկին սիրահարվում եմ, բայց Արմիկին էլ եմ սիրահարվում:
– Բա քո լոշտակ Հրայր ախպե՞րը:
– Հրայրն իմ կարտոլը գողացավ:
Մայրիկն ու հայրիկը անկյուն քաշվեցին և իրար մեջ խոսելով հասկացան, որ այդ ցորենից ձավար անելն ինձ համար լավ կլիներ, բայց ես կամաչեի տանտիրոջ աղջկանից, քանի որ միայն ջուր ու ձավար կլիներ: Աշխույժով մեջ գլորվեց երկանքը, բարակ վզի վրա մեծ գլուխը ճոճելով՝ Հրայրը պտտեց երկանքը, Նանարիկը ցորենի կեսը

բովում էր փոխնձի համար: Աղացածը մաղելուց հետո տակը եղավ կոշտ ալյուր, իսկ երեսի խոշորը նորից աղացինք: Հետո աղացինք Նանարիկի բոված ցորենը, բայց որպեսզի այդ Հրայրը հանկարծ աղանձ չգողանա՝ Նանարիկը երկանքի մոտից նրան քշեց ու երկանքի պոչից կախվեց ինքը: Եղավ մանր ձավար, ալյուր, փոխինձ: Ալյուրը խմոր դարձավ և խմորը համարյա թե իսկական էր, ձավարը կապվեց առանձին տոպրակով, փոխինձը՝ առանձին: Այդ գող Հրայրը համենայն դեպս հասցրեց մի բուռ փոխինձ գողանալ. մայրիկի մեղավորության պատճառով:

– Բոլորը քո պատճառով,– լաց եղավ Նանարը,– բոլորը քո մեղավորության պատճառով:

Շրթունքները փակ ժպտալով՝ այդ պահին մայրիկը նրան ցանկացավ կանաչ, անամպ օրեր, մի լավ տղա՝ մի լավ ընկեր, Հրայրի համար աղաչեց համերգավարի տաշտոն լուսավոր տաք ապարանքներում, ինձ սպիտակ վերնաշապիկով տեսավ դասարանի դեմ աշակերտներին դաս բացատրելիս... և աշխարհն այնքան մաքուր էր, և ձայներն այնքան պայծառ էին, և երջանկությունն այնպես էր ղողանջում, որ մայրիկը իրեն դրեց կանաչ գերեզմանոցի լուռ քարերի տակ, և նրա սիրտը թպրտաց ուրախությունից ու թախիծից:

– Հրայրը՝ դասերը սովորելու, Նանարը՝ անկյուն, Արմենը՝ տաշտակ, շո՛ւտ,– հրահանգեց մայրիկը:

– Ի՞նչ տաշտակ:

– Արմիկը լողանում է:

– Ջուրը ես եմ լցնում:

– Դու աղջիկ ես, Արմիկը՝ տղա, երեսդ գնա պատին արա:

– Արմիկը ախպերիկ է, տղա չի:

– Ես երեկ եմ լողացել:

– Մեջքդ ո՛վ է քսել, կուրանամ ես, գլուխդ ով է քսել, ոտքերդ ով է տրորել:

– Հասմիկը,– դասագրքի մեջ կարդաց Հրայրը:

Մայրիկն ինձ տաշտակ նետեց, մեկ էլ տեսա մերկ եմ, չեմ թողնում լրիվ մերկացնի, ինքը ներքև, է քաշում, ես՝ վերև: Ինքը ծիծաղելով խփեց

ձեռքերիս, ուզեցի լաց լինել, մեկ էլ տաք ջուրը լցվեց բերանս, վառեց գլուխս: Հազում էի, մեկ էլ օճառը բռնեց աչքերս, փակեց բերանս: Օճառի միջից՝ Հրայրը քմծիծաղ էր տալիս, Նանարն իր անկյունում լուրջ գործի էր: Հետո, երբ արդեն Կիրովական էի, հասկացա, թե իր անկյունում Նանարն ինչ լուրջ գործի էր: Կարծում էի ձեռքերս ներքևում պահում են ներքնաշորս– ներքնաշորս հագիս չէր: Դա արդեն բողոքելով ոռնալու բան էր, բայց ջուրը վառեց, և ձեռքերս թռան գլուխս պահելու:– Տաքաաա՛:– Բերանս ջուր մտավ, օճառը ծեփեց աչքերս և սառնությունը կծեց ուսս:– Սառնաա՛:– Թաց ձեռքի ապտակ լսվեց ու Հրայրի ծիծաղը, (սառն ուրեմն Հրայրն էր լցրել), հետո փափուկ ջուրը փաթաթվեց ինձ վերից վար, փաղաքշեց, շոյեց ու գուրգուրեց: Ուժեղ, հարազատ մատները բռնեցին քիթս.– Խինչ արա... մեկ էլ,– ու փափուկ ցամքոցը կրծքի պես գրկեց գլուխս:

Թմբիրի մեջ՝ Նանարն ուսըս ծածկում էր, ճակատս համբուրեց մազոտ մի կզակ, կրունկիս մեջ խաղաց ոչ այն է խուտուտ, ոչ այն է ցավ, գնացքից թռա ու ընկա փափուկ բամբակի մեջ: Սա մեր տունն է: Հրայրի հետ սահնակը կառնենք, կգնանք անտառ, սահնակով կբերենք չորությունից փշրվող փայտ: Սառցակալած ճանապարհի վրա սահնակը կփախչի, սառած տրեխներս դեմ կտանք՝ սառույցը չի պահի: Սահնակը կթռչի քարի գլխից: Մրսելով՝ կովերին ջուր ու խոտ կտանք ու կվազենք վառարանի մոտ: Վառարանին կարտոլի շերտեր կփռենք, վրան աղ կանենք, վառարանի մոտ կկարդանք «ժան Քրիստոֆ»: Եթե հիվանդանանք՝ մեկը աղոթքի ու սիրո բառեր մրմնջալով կհամբուրի մեր ճակատը, գյուղամիջի իրենց տնից եկած կլինի հորաքույրը, մշուշի մեջ՝ կերևա նրա տագնապած ժպիտը, մեկ հատիկ խնձորը, և խնձորի բուրմունքը մշուշ կթվա:

– Ես չե՛մ գնում Կիրովական:
– Փոքը՛ր, փոքր – ինը դեռ չի լրացել:
– Ցո՛ւրտ, բոլորը վերարկու ունեն... ես ձեր հացը չեմ տանում:
– Հիմա կբռնեմ ու շան ծեծ կտամ:
– Շատ բան կանես... ձեր հացը ձեզ լինի, չեմ տանում ձեր հացը:
– Սահակը հորըդ պարտք է, տվեց՝ վերարկու կառնենք:
– Մայիսի՞ն:

– էն մարդուն հո չենք խեղդելու:
– Իմ ինչ գործն է, խեղդեցեք:
– Դու իմ խելոք Արմենն ես, դու իմ հույսն ես, դու իմ ապագան ես, դու քո խեղճ հոր օգնականն ես, դու պիտի դառնաս Կիրովական քաղաքի առաջին մարդը:
– Չե՛մ դառնա:
– Կդառնաս ու կասես՝ ճիշտը իմ մերն էր:
Իրիկունը կերանք աղով խաշած կարտոլ ու խմեցինք մեղրահացով թեյ: Տասը հատ հացը պատուհանի գոգին հովանում էին, որ դարսվեն ու կապվեն: Հետո կստանայի թոշակի հարյուր քառասուն ռուբլին: Նանարիկը ժպտում էր, բայց սիրտը ետ տվեց: Նա անկողնում դարձյալ ժպտում էր բերանը փակ, այտիկները կարմիր, շրթունքները ձգած: Հայրիկը գոմից եկավ, ի՞նչ էր բերել, ի՞նչ էր բերել, ի՞նչ էր բերել– այդ խոր ձմեռով Նանարի համար մի հատ սպիտակ ձու էր բերել: Ո՞վ էր ածել, ո՞վ էր ածել, ո՞վ էր ածել...
– Ոսկեկա՛տարը:
– Ո՞վ է ուտելու, ո՞վ է ուտելու, ո՞վ է ուտելու...
– Քսենք... քսենք, քսենք,– կակազում էր Նանարիկը,– քսենք հացին՝ դառնա գաթա:
Մայրիկը թաքուն մի երկու կաթիլ լաց եղավ:
– Դա չի ապրի,– լաց եղավ մայրիկը,– դա էնքան լավն է, որ ապրելու իրավունք չունի: Էս աշխարհում դա ո՞նց է ապրելու,– խեղդվեց մայրիկը:
Հետո, ընտանիքը քնած էր. Հրայրը քամակը դրել էր բարձին, գլուխը ոտքերի արանքում: Նանարը ծունկը դրել էր Արմիկի կրծքին ու քնի մեջ ժպտում էր. Արմենի բազուկը քրոջ գլխի տակ էր, նա շնչում էր վարդագույն մաքուր թոքերի ամրողջ տարողությամբ և յուրաքանչյուր տասը րոպեում մի թիզ հասակ էր քշում: Հրայրը երազի մեջ խաբեց, թե թակարդն աղվես է բռնել, գայլի չափ, համարյա թե գայլ է, մորթին՝ հինգ հարյուր ռուբլի. հայրիկը քայլում էր կանաչ արտերի փափկության միջով: Մութ սենյակում վառարանը սառչելով կուչ էր գալիս, մայրիկը, բաց աչքերով, տեսնում էր սառը Կիրովականը լուսնի

տակ, մի դարչնագույն մեղրահոտ ամառ, Արմենի հագին սպիտակ վերնաշապիկ, այծի լիքը կուրծք ու կարմրող պոմիդոր:
– Որ Սահակը պարտքը տա...
Այդ արդեն ճանապարհին էր:
– Որ Սահակը պարտքը տա՝ ուղարկեցեք ինձ, Հրայրի համար ականջավոր գլխարկ առնեմ, Նանարի համար՝ վերարկու:
– Նանարը տանն է լինում, Հրայրն էլ ճաշվա հերթի է դասի գնում, ոչ նրան է վերարկու հարկավոր, ոչ էլ նրան՝ գլխարկ:
– Արձակուրդային թոշակը չորս հարյուր քսան ռուբլի է անում: Երեք անգամ հարյուր քառասուն:
– Եվ խոսիր, և արի: Տղայի վերարկուն ի՞նչ արժե:
– Մի անգամ գնացի որ նայեմ՝ խանութը փակ էր, ցուրտ էր, վազելով հանրակացարան եկա:
– էդ ո՞նց ես քայլում:
– Ոտքս չգիտեմ ցավո՞ւմ է թե քոր է գալիս:
– Ոչինչ, ոտ է, գլուխ չի: Լավ մարդ կդառնաս ու տեղից տեղ մեքենայով ու ձիով կգնաս: Հեռախոսով կասես՝ ես եմ, ձի ղրկեք, գամ:
– Մարտին գա՞մ թե չգամ:
– Հարմարությանդ նայիր:
– Բա որ բոլորը գնան իրենց տները, ես մենակ ի՞նչ անեմ:
– Դու բոլորը չես, դու Արմենն ես, դու էս օրը պիտի հիշես:
– Որ ամառը գամ՝ մոռ կքաղեմ, կտանենք Դիլիջան կծախենք:
– Լավ է Կիրովական մի թեթև գործ գտիր, պահակի–բանի տեղ:
– Ամառն է՞լ:
– Շուտ-շուտ արի: Ոտքդ վայ թե ցավամ է:
– Չգիտեմ ցավում է թե քոր է գալիս: Դե փողն է՝ մոռով պահակությունից շատ փող կլինի, էլի:
– Միտքդդ էս սրբած աղքատությունից, քանդվող էս գյուղից կտրիր:
– Ամառն է՞լ:
– Ամառն էլ ու միշտ էլ:
Երբ Հոնուտ բլրից ես ետ նայեցի՝ նա ծնկել էր սուրբ Սարգիս մատուռի դեմ: Նա հավատացյալ չէր, նա ինձ համար հիմա հավատացյալ էր դարձել: Խաչերի ոլորանից՝ նա դեռ ծնկած էր մատուռի դեմ: Ձնծաղկի

բլրին ես կանգ առա. իբր թե շտկում էի շալակս, ուսիս վրայով ես թաքուն ետ նայեցի՝ նա կանգնած էր մատուռի տակ, սպիտակ ձյուների մեջ, և ձեռքով ասում էր՝ գնա, գնա, գնա: Սառը լռության մեջ ես կարծես թե լսում էի ճախարակի երգի պես բարակ նրա ձայնը.
– Գնա, գնա, գնա...

Այգետակ նստեցի հանգստանալու՝ կրունկս սկսեց ծակծկել. կարծեցի թմրել է, հանեցի տրեխս, գուլպաս, շփեցի: Շփելու հետ ծակծկոցները միացան, դարձան մի գունդ ասեղ, հետո եփած խնձորի պես ցավը փափկեց ու կլորացավ: Կրունկս ցուրտը տարել էր: Երբ գնացքից ցատկել էի՝ կրունկս կոտրել էր ջրափոսի սառույցը, թրջվել, հետո ճանապարհին ցրտահարվել: Ցավն ուռավ ու մանր ցոլքերով խփվեց ոսկորի պատերին– դեպի նե՛րս, դեպի նե՛րս: Ես ձյուն վերցրի, ձյունով շփեցի այդ կրունկը այնքան, մինչև ցավը պաղեց: Ցավը հանգավ: «Դե հիմա գնա...»: Ես հայհոյեցի ցավին՝ ինչպես որ կենդանի թշնամուն կհայհոյեն: Երբ ես շփում էի կրունկս, և ցավը կուչ գալով մտնում էր իր որջը, ես զգում էի, որ մեկը թաքուն ինձ նայում է: Ես այդ կողմնակի աչքն զգում էի և զգում էի, որ նա ինձանով հիանում է, նա ասում է. «Երանի քո հորը, որ քեզ նման տղա ունի», և ես ինձ արժանի էի համարում նրա հիացմունքին: Ես արժանի էի այդպիսի գովեստի:
Ես հագա գուլպան, տրեխը, կապեցի տրխաթելը և ելնելու հետ երբ բարձրացրի գլուխս՝ ձյուների մեջ մի շուն էր պպզել ու նայում էր ինձ:– Բասա՞ր,– հիվանդ մտերմությամբ հարցրի ես, սակայն նա չվերցրեց իմ մտերմությունը, որովհետև գայլ էր: Նա ետ գնաց, բայց ոչ փախչելու պես, այլ այնքան, որ հասկացնի, թե ինքը գայլ է:– Ի՞նչ ես ուզում, անասուն,– ճչացի ես, սակայն նա չռվեց ու պինդ կպավ իր տեղը:– Դու էիր պակաս, ես քու...– Տարիներ հետո ես հիշեցի և հասկացա, որ իմ պատանության մեջ դա եղել է իմ միակ հայհոյանքը.
– Դու էիր պակաս, ես քու...– Ողնաշարը ջահել կաղնու նման ճկած, մատները կեռած այդ երեխան քայլերը դնելով հատ առ հատ, ամեն քայլի հետ կարծրանալով ու մեծանալով, մղվեց դեպի գայլը: Նրա պոչը մտավ ոտների արանքը, նա փշաքաղվեց: Նանարը ժպտում էր քնի մեջ, թախտին հայրիկը հոգնած թիկնել էր, է՛ն հին ժամանակներում

Սիմոն պապի ծունկը ճապոնացիները հանել դրել էին իրենց գեներալի ծնկի մեջ, իրեն ասել էին՝ դու գնա: Դա ես լսել էի այն ժամանակ, երբ փոքր էի, նիհար երեխաներս ցուրտ դասարանում սարսափելի բաներ էինք պատմում և ուրիշի ցավից կուչ էինք գալիս ու սեղմվում սառը վառարանին:

Գունատ աչքերն այդ անասունի անմիտ նայվածքին՝ երեխան գնաց խեղդելու նրան: Երեխան չոր կոկորդով ինքնազորացման բառեր էր մրմնջում և մղվում էր ուղիղ դեպի գայլի աչքերը: Գայլն աչքերը կտրեց նրա գունատ աչքերից, գլուխը թեքեց և ոտքերով ձնափոշի արավ. նա միամտացնում էր այդ երեխային, որ ցատկի, բայց երեխան գիտեր, որ իրեն միամտացնում են և գայլին ընդառաջ էր գնում դանդաղ ու մահակի պես պինդ, գայլը մոռացավ, որ ինքը գայլ է, կլանչոցով ետ թռավ:

Երեխան հիմա կանգնած էր նրա տրորած տեղը, շտկվել էր, մեծացել, հաղթել,– հիմա քսան-քսանհինգ տարեկան գյուղացի մարդ էր: Արի, արի,– հեգնանքով ասաց նա: Եվ գայլը ետ-ետ արեց, ցատկով պտտվեց, ետ գնաց և պոչով ու ոտքերով ձնափոշի արավ:– Էդ գիտենք,– ասաց երեխան: Եվ նորից կլանչոցով ետ-ետ գնաց, առաջ ցատկեց, շուռ եկավ ու մի քիչ փախավ: Թափով ետ եկավ և հալածվածի տես փախավ: Գիտակցված ծրագրի նման մի բան նկատվեց նրա արարքի մեջ, խելացի թշնամին կարծես մտել էր գայլի մորթու մեջ և նայում էր գայլի ներսից: Սարսափի անհայտ մի եզր էր բացվում: Դա գա՞յլ էր, բորենի՞, թե՞ ինքը մահը: Երեխայի ջլերն սկսեցին կաթվածահար լինել: Երեխան ոչնչանում էր մինչև գայլի հարձակվելը:– Հայրիհի՛կ,– բայց զգաց, որ իր ձայնն արդեն մեռել է: Երազում տեսածի պես՝ գայլը մոտենալով ու հեռանալով դեռ պարում էր. ետ-ետ էր անում, ցատկով պտտվում էր, մի քիչ առաջ էր գալիս ու հալածվածի պես մի երկու ցատկ փախչում: Երեխան տեսավ, որ նստած տեղից ինքը ելնում է, կանգնում է, ճիպոտը ձեռքին ձյուների միջով անցնում էր մայրը: Սպիտակ ձյան վրա երևաց մտերիմ ուրիշ մեկը. շա՛տ ծանոթ, հարազա՛տ, իրենց ընտանիքի՛ց, նա մոտեցավ նրան և հասկացավ, որ մոտեցել է տոպրակին:– Տոպրակ ջան,– ասաց նա և լաց եղավ,– ուզում էր ինձ ուտի:– Իսկ գայլը դեռ պարում էր

մոտենալով ու հեռանալով: Երեխան տոպրակին պատմեց, որ գայլն ուզում էր իրեն խաբել: Իրեն խաբել, ինչպես ավանակներին են խաբում:

Գայլն ուզում էր, որ ես իրեն, իբր թե վախկոտին, հալածեմ– հալածեմ մինչև ճանապարհից հեռու թաքուն մի տեղ, իսկ ես շուռ եկա ու շալակեցի փոխնձի-ձավարի–հացի տոպրակը: Գայլը կանգնել էր և կապկպում էր եղածն ու անելիքը, բայց այդ տարօրինակ որսը մտածելու ժամանակ չտալով հեռանում էր: Գայլն անկամ հետևեց նրան՝ հուսալով, թե ճանապարհին կգտնի իր անելիքը: Որսը կանգ էր առնում՝ գայլն էլ էր սպասում, որսն շտապում էր՝ գայլն էլ էր շտապում: Հիմա թելադրողը որսն էր և ենթական գայլը: Որսը շուռ եկավ ու ասաց.– Ի՞նչ ես ուզում, անասուն:– Գայլն էլ կանգնեց ու, մի կարգին չհասկանալով, դեսուդեն նայեց: Որսը շալակը մեջքին շտկեց ու գնաց՝ էլ բանի տեղ չդնելով գայլին, և գայլը նրան հետևեց որպես ճանապարհի սովորական ընկեր: Բլրաշարքի մոտ նա շալակը շտկեց ու ասաց.– Արի, արի, քեզ Դսեղա շների բերանը տամ,– բայց գայլը թեթևակի նայեց ձյան մեջ ցատկած մկանն ու սպասեց:
Ոլորանում նրանք մի անգամ շատ մոտեցան, գայլը փշաքաղվեց ու կարծեց հիմա ցատկելու է, բայց այդ պահին երկրի վրա դղրդաց ու մարեց ինքնաթիռը, հետո ականջի մեջ ծոր առավ շան ոռնոցի պես մի բան, և բլրի գլխից՝ դեմը կայծկլտում էր Դսեղը: Գայլը ետ չդարձավ. մի պահ մտածեց ու գնաց նրան զուգահեռ: Գյուղը փաթաթված էր շների հաչոցի մեջ, լույսերը վերուվար էին անում, տանիքների ետևից կտցում էին նրա աչքերը, իսկ այդ տղան քմծիծաղով նրան հրավիրեց գյուղ.
– Դե որ էսքան եկար՝ էս մի քիչ տեղն ինչո՞ւ չես գալիս:
Եվ նրանց արահետները դանդաղ հեռացան իրարից. նրա ճանապարհը մտավ գյուղ, իսկ նրա կածանը գնաց իբր թե շրջան տալու հաչոցների շառավղով, բայց հենց որ կածանը հպվեց անտառին, նա իր սահքը ետ ծալեց և վարգով, կարճ ճանապարհով, կտրեց դեպի Այգետակ, որտեղ, իր հիմար կարծիքով, ձյուների մեջ նստած դեռ ոտքս տրորում էի ես:

Մինչև Դսեղ գայլը, Դսեղից մինչև կայարան գայլի հուշը չթողեցին ոտքս ցավի: Կայարանի դահլիճը լույս ու տաք Էր. գլուխն ամուսնու գոգին՝ քնել Էր ռուս կապիտանի վիթխարի կինը. բանակայինների խումբը, կապիտանից և իրենք իրենց իսկական զգացմունքից ամաչելով, թաքուն ծաղրում էր ստեփանավանցի պչրուհուն. խաշած հավ ջարդեց ու ոտն իմ բուռը խցկեց իմ հորը շատ նման մի տղամարդ, նրա երեխան աղ արեց իր ձեռքի մսին, աղ արեց հոր պատառին, աղ պտղունցեց ու սահելով իջավ նստարանից, եկավ կանգնեց իմ դեմ. թևերը մեծ կրծքերի տակ խաչած՝ տաք հայացքով ինձ ու երեխային նայում էր մի մայր ու կին... և այդ տաք գուրգուրանքի մեջ ոռնոցով պայթեց իմ ոտքը: Ցավը կարեկցող գտավ և ուզեց փայփայվել: Միսը բերանիս մեջ՝ ես կտրտվելու չափ գալարվում էի, իմ գլխին արդեն մարդիկ էին հավաքվում... բայց գնացքը եկավ:

– Հիմա որ ականջներդ կտրեմ՝ ի՞նչ կասես,– հանգիստ հարցրեց փոստատար վագոնի պահապանը:

– Եթե ավելորդ են՝ կտրիր, եթե ավելորդ չեն՝ ինչո՞ւ ես կտրում:

– Լեզուդ է երկար, բեր լեզուդ կտրենք:

– Ախր ինչո՞ւ ես կտրում, է:

– Գիտե՞ս ուր ես բարձրացել:

– Փոստատար վագոն:

– Ինչո՞ւ:

– Որ փող չտամ:

– էդ ո՞նց չտաս:

– Էնպես:

– Գիտե՞ս, որ արգելվում է:

– Գիտեմ:

– Բա ինչո՞ւ ես բարձրացել:

– Հատուկ բարձրացել եմ, որ քո փոստը գողանամ, տանեմ նամակները կարդամ:

– Հնար չկա, լեզուդ կտրելու եմ:

– Բա ինչո՞վ դաս կպատմեմ:

– Սովորո՞ղ ես:

– Մանկավարժականում:

– Դասատու պիտի դառնաս: Ո՞րտեղացի ես:
– Մեր գյուղացի եմ:
– Սրախոս էլ ես: Տոպրակինդ էդ ի՞նչ է:
– Գոմեշ է, գողացել եմ, կեսը տա՞մ քեզ:
– Հիմա որ գնացքը կանգնեցնեմ ու քեզ իջեցնե՛մ էս հանդում:
– Կանգնեցրու:
– Տոպրակինդ էդ ի՞նչ է:
– Ինչ որ է՝ ինձ համար է, քեզ համար չի:
– Եթե իսկական վագոն նստեիր՝ ինչքա՞ն էիր տալու:
– Չէի տալու:
– էդ ոնց չէիր տալու, հորըդ սե՞լն է:
– Այո, հորըս սելն է, իմ հոր սելն է:
– Եթե հիմա քեզ իջեցնեմ էս հանդում:
– Իսկ եթե ե՛ս քեզ իջեցնեմ:
– Իջիր, իջիր, քո կամքով իջիր, թե չէ կթռցնեմ:
– էդ՝ աղավնի պահո՞ղ ես:
Մինչև Կիրովական նա իմ հոգին կերավ, զզվանքի մեջ ցավի մասին ոչ մի վայրկյան ես չկարողացա հիշել:

Հացն աղի էր, ավազի պես՝ չէր ծամվում: Նանարիկը, երբ ինձ լողացնում էին, քաշվել էր անկյուն, խմորին նորից աղ էր արել ու ջուր էր լցրել, բայց ալյուր չէր եղել: Ես ուզում էի բարկանալ նրա վրա, բայց հեռվից հեռու կարոտում էի նրա այտիկները՝ երբ նա ժպտում էր բերանը փակ: Ինչքան էլ սովածացա՝ հացը չէր ուտվում: Ես ինձ խաբում էի, թե չեմ կարողանում ուտել, որովհետև ինձանից թաքուն մեկ-մեկ փոխինձ եմ ուտում, վախինձը ես թաքցրի ինձանից, բայց հացը դարձյալ չէր ծամվում:
Ստիտակցիները վերջացրին իրենց լավաշը, ծախսեցին իրենց ռուբլիները, կարդալով՝ թաքուն ականջ դրին իմ հացին, բայց հացն աղի էր, ամոթ էր այդ հացից նրանց բաժին հանել:
Տանտիրոջ Հասմիկը դուռը ծեծեց, գեղեցիկ գլուխը ներս մտցրեց, եկավ հարցնելու Պիրենյան թերակղզու տեղը և նայելու իմ երեսին, բայց ես ժամանակ չունեի, ես թերակղզու տեղը չգիտեի, իմ հոգսերի

մեջ թող ինձ մենակ թողնեին, ես ուշադիր կարդում էի: «Պահ, իսկի էլ», Հասմիկը խռովեց ու դարս գնաց, վիրավորվածությունից նրա ականջները վարդագունեցին, սպիտակ ժապավենով արմատից պինդ կապած նրա հաստ հյուսը ճոճվեց ու դռան շխկոցի հետ փաթաթվեց վզին... բայց հացն աղի էր, ոչ ոք չպետք է իմանար, որ իմ մայրը աղի հաց է թխել:

Սառը շատ ջրից իմ կոկորդը թարախակալեց, և սպիտակցիները հեգնանքով ժպտացին, որովհետև ես նրանց չէի խղճացել ու մի կտոր հաց չէի տվել: Հասմիկի մայրը թեյ բերեց, բայց ես հիվանդ չէի, ինձ պետք չէին նրանց թեյն ու... ճանապարհի իմ գայլին ու փոստատարի պահակին ես ավելի էի սիրում, քան նրանց, ովքեր խղճում էին ինձ, այդ խղճահարությունն ինձ սպանում էր:

Գրականության դասատու Մամիկոնյանը, ասացին, իմ մասին հարցրել է, գալու է ինձ տեսնի... Ես շորերս հագա, պահարանը կողպեցի և հանրակացարանից փախա: «Արև» առողջարանի աշտարակները ճոճվում էին ագռավի սառը կռավոցի տակ, ձյուների մեջ երևաց ու կորավ նարնջի կեղև թե խնձոր, շան հաչոցը հուշի չափ հեռու էր, բայց շունը խփվեց ինձ ու կլանչոցով ետ ցատկեց: Սեդրակ հորեղբոր համարյա թե ապարանքը մաքուր ու լայն էր և տաք խոհանոցում հիմա ծփում էր ջրալի ճաշի բուրմունքը, բայց նրա հարսը միշտ զայրացած էր ու երբեք չէր ժպտում: Հանրակացարան Աղյուսագործների՞ փողոցով էի վերադառնալու թե՞ Դպրոցականների: Մայրիիի՛կ...

Գիշերն ինձ տարան Հասմիկենց տուն: Հայրը ճակատիս թրջոց բռնեց, մայրը ճաշ էր տաքացնում: Հայրը Երևան սովորելիս հիվանդացել էր ճիշտ իմ հիվանդությամբ, հորը բուժել էր տանտիրոջ աղջիկը, իսկ ես ահա կոպիտ էի վարվել Հասմիկի հետ. նա չէր թողնի ես հիվանդանամ, նա համարյա թե պատրաստի բժիշկ է: «Աղի ձուկ ես կերել ու սառը ջո՞ւր խմել, ինչո՞ւ ես աղի ձկան վրա սառը ջուր խմել. ոչինչ, որ աղի ձուկ ես կերել, երկու օրում կբուժվես»: Նա սեղմեց բացեց իմ բերանը և ճաշ լցրեց: «Իմ երեխայի չափ ես, հիմա կծեծեմ»: Նա կլլեցրեց իմ արտասուքը, տաք ճաշը, իմ թարախը: «Ախպերացանք», ասաց նա:

Նա գնաց առավոտյան հերթափոխի, ես ելա ու մտա մեր սենյակ, իմ սառն անկողին:
– Քեզ համար թեյ եմ բերել, մեջը լիմոն եմ գցել:
– Քեզանից լիմոն խնդրող չկա:
– Առանց լիմոնի՞ ես ուզում:
– Քեզանից թեյ խնդրող չկա:
– Պա՛հ:
– Գնա էստեղից:
– Չեմ գնում:
– Քեզ ասում են գնա էս սենյակից:

Հայրը գործից եկավ: Եկավ հոգնած նստեց իմ անկողնին: Չգիտեր՝ խոսե՞ր թե ննջեր: Նրա ամեն ինչը՝ և դուռը թակե՛լը, և փլվելու պես նստե՛լը, և ելնելն ու խո՛սքը, ամեն ինչը՝ ինքն ամբողջությամբ դանդաղ ու անկասեցնելի էր: Ասաց.
– Հիմա ինչ ես ասում, ե՞ս եմ լավ տղա թե դու:
Ասաց.
– Ցավում է՝ ոչինչ, մի՛ խոսիր:
Ասաց.
– Բայց ես ու դու իրար հետ հաց ենք ուտելու:
Ես նայեցի իմ պահարանին ու քարացա:
– Քու հացը դնենք,– ասաց,– իմ հացը դնենք ու տղամարդ ընկերոջ պես իրար հետ հաց ուտենք: Ծուլավերից խաղողի արաղ ունեմ, ապրում ենք,– ասաց,– արդեն ապրում ենք:
Ես գլխով մերժեցի: Ասաց.
– Քեզ համար չեմ խնդրում, ինձ համար եմ ասում: Չեմ կարողանում մենակ հաց ուտել: Բանակը պինդ ընկերության է վարժեցրել:
Նա ինձ խաբում էր:
– Խաբում ես,– ասացի:
– Խաբում եմ,– ասաց:– խաբում եմ թե չեմ խաբում՝ մեծը ես եմ:
Նա ծանրորեն կռացավ, իմ պահարանից, ծանրորեն, ասես ծանր քար Էր հանում, մի հաց հանեց, ամբողջ թոքերով հոտ քաշեց և այնպես ասաց, որ մինչև հիմա հիշում եմ.

– Մեր դժվար հացի հոտն է: Վեր կաց:
Իրենց պատշգամբով մինչև ճաշասենյակ՝ ես տասն անգամ քրտնեցի ու ցամաքեցի: Իմ դեմ նրա ծանր թիկունքն էր և նրա ձեռքին՝ իմ աղի, չոր հացը: Ես ամաչեցի նայել Հասմիկին, որովհետև նա տեսնում էր, որ ես պարտվում եմ: Իմ մոր ու քույրիկի թխած հացը, այն ցորենի հացը, որ իմ հայրը թևի տակ իջեցրել էր մինչև Հովտի ջաղաց և թափից ու սրտնեղությունից քրտնելով բարձրացրել գյուղ... այդ հացը նա դրեց քաղաքային իրենց թեթև, սպիտակ, բուրավետ հացի մոտ և արմունկները հենած ինքը նստեց: Նա ընտանիք էր պահում, նրա սեղանին օղի կար, նրանց սփռոցը մաքուր սպիտակ էր, նրանց տունը տաք էր, հիվանդ մի տղայի նա բերել էր կերակրելու, նա հանգիստ էր... նա չէր հասկանում, որ այդ տղայի կոկորդը լացից խցվել է: Նա կում-կում, դանդաղ խմեց օղին, ծանր ձեռքը մեկնեց, մի ձեռքով կոտրեց այդ հացը, դարձյալ կոտրեց, հոտ քաշեց և ծամեց:
Շարունակեց ծամել և ինձ աչքով արեց:
– Ոչինչ,– ասաց,– դու տղա ես, բայց մենք էլ ենք տղա: Մանանեխ կերած կա՞ս, զուտ մանանեխ՝ գարչիցա:
Աղի, ծանր իմ հացը նա ծամեց ու պատմեց: Կնոջն ու աղջկան նա չթողեց այդ հացին ձեռ տալ. վերցրեց, դրեց իր դեմ և պատմեց դանդաղ ծամելով՝ ասես քար էր աղում.
– Մանանեխ, զուտ մանանեխ, միայն մանանեխ՝ գարչիցա: Պատմությունից գերազանցներ ես ստանում, գիտես Լենինգրադի շրջափակումն ինչ է, բայց ոչինչ չգիտես: Որ կոկորդդ սեղմում են, նորից սեղմում են, անընդհատ սեղմում են և գոնե երազ չի՝ որ արթնանաս ազատվես– աչքերիդ նայելով սեղմում են՝ որ խեղդեն, դա Լենինգրադի շրջափակումն է: Փլված շենք կար ձյուների տակ, ձյունը քանդեց, քանդեց, քանդեց, ձյունը ետ տվեց... չէ, ինչո՞ւ շան պես, շունն ո՞վ է, որ դիմանա... բայց մենք մարդ ենք, չէ՞... ձյունը քանդեց, ետ տվեց, քանդեց՝ մի տուփ մանանեխ գտավ՝ գարչիցա, մանանեխի ալյուր: Սպիտակ ժամանակի մեջ սպիտակ ամբողջ աշխարհում՝ մի տուփ մանանեխ: Ձնի հետ խառնեց, մանանեխի ցեխ արավ, դժվար խառնեց, քանի որ ձեռքերում տաքություն չկար, ձյունը չէր հալվում, ու խմեց մանանեխի ցեխը: Աղիքներն սկսեցին այրվել, գրազ կգար, թե

ինքն աղիքների բոցը տեսնում է: Երկու ձեռքով փորը բռնեց, ինքը մտավ իր ոտքերի արանքն ու ընկավ: Ձյուների մեջ այդպես ընկած էր, մեջը ոչ ուժ կար, ոչ հիշողություն, բայց գիտեր, որ մանանեխն այլևս իր ներսում է, իրենն է, սպանելով ապրեցնելու է: Հացդ կեր,– ասաց նա,– եկել ես ում մոտ ինչով ես պարծենում: